## Արձանագրություն N 4

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կարիքների համար <<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների>> ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-02>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Աղավնի Բուդոյան** ՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Անահիտ Ավագյանը՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. Տեղեկատվություն՝ Հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

1.1 «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ն և «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են իրենց հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, հետևաբար նշված մասնակիցների հայտերը ևս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.1 Նկատի ունենալով, որ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են այդ գնումները կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, անհրաժեշտություն է առաջանում ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Սակայն.

2.1.1. 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված միակ մասնակցի կողմից ներկայացված գնի առաջարկում 1-ին չափաբաժնի մասով նշված ինքնարժեքի գումարն արդեն իսկ գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.1.2 2-րդ չափաբաժնի մասով «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկներում 2-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարն արդեն իսկ գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.1.3 3-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկներում 3-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքները արդեն իսկ գերազանցում են այդ գնումները կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվի, ինչպես նաև 2-րդ չափաբաժնի մասով գնի նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվի «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի հետ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին.**

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ 4-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չի ներկայացվել՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերը՝ հանձնաժողովը որոշեց.

ա) «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-02» ծածկագրով ընթացակարգը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած,

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Հանձնաժողովը որոշեց.**

Միաժամանակյա բանակցություններ վարելու հանգամանքով պայմանավորված՝ հանձնաժողովի նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հոկտեմբերի 20-ին՝ ժամը 12:00-ին՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ի վարչական շենքում (Վ. Սարգսյան 5)՝ VI հարկի նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _______________ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ _______________ Աղավնի Բոդոյան

_______________ Կարեն Մելքոնյան

_______________ Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝ _______________ Մարիամ Հայրապետյան